

Արձանագրություն թիվ 6

26 հունվարի 2015թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ա.Ս.Առաքելյանը, խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները: Նիստին հրավիրվել էին մասնաճյուղի Ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Ց.Դավթյանը, տնօրենի օգնական Ն.Գրիգորյանը :

ՕՐԱԿԱՐԳ

1. Դեկանի կիսամյակային հաշվետվություն:
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
2. 2014-15 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
3. Ցուցահանդեսների կազմակերպման, դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության աստիճանի բարձրացման ուղղիների քննարկում:
/զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
4. Ընթացիկ հարցեր:
/ զեկուցող Ա.Շ.Մարգարյան/

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստում նախատեսված է չորս հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2014թ. հուլիսի մեկից մինչև այսօր ֆակուլտետում իրականացված գործընթացների վերաբերյալ հաշտվեցություն՝ հիմք ընդունելով մասնաճյուղի զարգացման 2011-2015 թթ. Ռազմավարական ծրագիրը:

Լինելով առանձնահատուկ ֆակուլտետ, նպատակներն ու խնդիրները նույնպես տարբեր են մնացյալ ֆակուլտետներից: Արվեստի և արհեստի զարգացումը, տարածաշրջանում մշակույթային կյանքի աշխուժացումը, գեղեցիկի ստեղծումն ու դիզայնի Ժամանակակից մոտեցումների տարածումը պետք է լինեն ոչ միայն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, այլ նաև ուսանողների ամենօրյա հիմնական գործը:

Կիրառական արվեստի ֆակուլտետը այս տարվանից ունի երկու մասնագիտություններ՝ „Կիրառական արվեստ” և „Դիզայն”:

Սեպտեմբերի մեկի դրությամբ ֆակուլտետը ուներ 72 ուսանող, 68-ը՝ բակալավրիատում, 4-ը մագիստրատուրայում: Նրանցից 16-ը սովորում են պետպատվեր, իսկ 56-ը վճարովի համակարգում: Աշխատակազմը բաղկացած է 19 աշխատակիցներից, որոնցից 15-ը դասավանդողներ են՝ 10-ը հիմնական, 5-ը ժամավճարային հիմունքներով, իսկ 4-ը վարչական և ուսումնաօժանդակ: Ֆակուլտետում գործում են երկու ամբիոններ՝ „Գծանկարի գունանկարի և քանդակի”, „Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի” և գեղարվեստական խորհուրդ:

Մասնաճյուղում ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները, նրանց իրականացման ժամանակացույցերը՝ հաշվի առնելով տարվա առանձնահատկությունները: Այս տարի խնդիր դրվեց դասավանդողների առջև ունենալ ուսուցանվող զոնե մեկ առարկայի առարկայական փաթեթ՝ պորտֆոլյո, ինչը հաջողությամբ իրականացրին ֆակուլտետի բոլոր դասախոսները, իհարկե նրանցում կան նաև որոշակի թերություններ, սակայն երկրորդ կիսամյակում ևս մեկ առարկայի համար ձևավորելիս դրանք կբացառվեն:

Ուսումնական տարվա սկզբին ֆակուլտետի հիմնական դասախոսները անցել են վերապատրաստման դասընթացներ <<Մանկավարժություն>> և <<Դասավանդման ժամանակակից մեթոդներ>> թեմաներով:

Հարկ է նշել, որ դասավանդվող բազմաթիվ դասախոսություններ անց են կացվում նախօրոք պատրաստված ցուցադրությունների ուղեկցությամբ, ինչը ավելի մատչելի և արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը: Մասնագիտական առարկաների համար իրականացվում են ամեն տարի դասավանդման նոր տեխնիկայի ուսումնասիրություններ և մտահղացումներ:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում ֆակուլտետում անց են կացվում բաց դասեր, դասալսումներ, փոխադարձ դասալսումներ նախապես հաստատված գրաֆիկի համաձայն:

Ա.Շ.Մարգարյանը ընդգծեց նաև ֆակուլտետի ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությունը, որը հնարավորություն է տալիս վերհանելու թերացումները և փնտրելու ուղիներ նրանք վերացնելու ուղղությամբ:

Ֆակուլտետում գործող ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ ՈԻԽ-ն և ՈԻԳԸ-ն հաճախակի կազմակերպում են գիտահանրամատչելի միջոցառումներ և ինտելեկտուալ խաղեր:

Նշեմ, որ ֆակուլտետի նյութատեխնիկական բազան անընդհատ համալրվում է, ինչի համար շնորհակալ ենք տնօրենությանը, իսկ <<Դիզայն>> մասնագիտության կրթական ծրագիր իրականացման համար անհրաժեշտ կլինի ստեղծել կամ վերազինել նոր արվեստանոցներ և լաբորատորիաներ:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր մասնագիտության կայացման, զարգացման և հաջողության գրավականը դիմորդների մեծ հոսքի ապահովումն է: Այս նպատակով հոկտեմբեր ամսին ֆակուլտետի մի խումբ աշխատակիցներ այցելել են մարզի հանրակրթական դպրոցներ, հանդիպել բարձր դասարանի աշակերտների հետ, լուսաբանել և ցուցադրել ֆակուլտետում իրականացվող աշխատանքները և հրավիրել մասնակցելու նախապատրաստական կուրսում սովորելու:

Ֆակուլտետում առաջին անգամ նոյեմբեր ամսին ձևավորվել և ներկայացվել է տպագրության գովազդային բուկլետներ, որտեղ գետեղված են ուսանողների արվեստի տարբեր ճյուղերի հաջողված աշխատանքներ և տեղեկատվություն կրթօջախի մասին:

Նոյեմբերի 17-ին նվիրված ուսանողի միջազգային օրվան մասնաճյուղի դահլիճում կազմակերպվել է ցուցահանդես, որտեղ գերակշռում էին հենց իրենց՝ ուսանողների աշխատանքները:

Կիսամյակի ընթացքում բոլոր կուրսերի ուսանողները դասախոսների ղեկավարությամբ կատարել են պլեներենային աշխատանքներ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում(Հաղարծին, Կողբի եկեղեցի, Նոյեմբեյանի արվեստի դպրոց, Իջևանի քաղաքային զբոսայգի և այլն):

Գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով յուրաքանչյուր ստուգարքից և քննությունից անմիջապես հետո գհահատման ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայք էջում: Թափանցիկ է իրականացվում նաև ամեն կիսամյակի կրթաթոշակների նշանակումը և գեղչերի կատարումը, քանզի վերջիններս հատկացումները իրականացնում են ուսանողական կառույցները և ներկայացնում ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները և նշեց, որ ստուգարքները և

քննությունները անց են կացվել համաձայն հաստատված գրաֆիկի:Ֆակուլտետի բոլոր 72 ուսանողները մասնակցել են քննաշրջանին: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմում է 81,9% անվճար-100%, վճարովի 76,9%, իսկ ըստ կուրսերի պատկերը հետևյալն է՝ “Կիրառական արվեստ” առաջին կուրս/10ուսանող 100%/,”Դիզայն” առաջին կուրս /12ուսանող 100%/, “Կիրառական արվեստ” երկրորդ կուրս/17ուսանող 100%/, “Կիրառական արվեստ” երրորդ կուրս /29 ուսանող 44,8%,տասներեք ուսանողներ ունեն առարկայական պարտքեր, իսկ չորս ուսանողներ գերազանցիկ են:Մագիստրատուրայի երկրորդ կուրսի առաջադիմությունը կազմում է 100% (մեկ գերազանցիկ ուսանող): Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն ավելի բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ավելի ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից:

Վերոհիշյալ փաստերը մանրամասնորեն քննարկվել և համապատասխան որոշումներ են կայացվել ֆակուլտետի ամբիոնների համատեղ 24.01.2015թ. կայացած նիստում, սակայն խորհրդի նիստում կցանկանայի Ձեր ուշադրությունը հրավիրել երրորդ կուրսի վրա, որտեղ կան ծայրահեղություններ, բակալավրի չորս գերազանցիկները և ակադեմիական պարտքեր ունեցողները, ինչպես նաև անկարգապահ(չորս ուսանող ունեն 60 և ավելի դասաժամ անհարգելի բացակայություն) ուսանողները նշված կուրսում են: Մենք ունենք ամբիոնի նիստի որոշում , որ երկրորդ կիսամյակում ուսումնական խորհրդատուն ամենօրյա աշխատանք պետք է իրականացնի երրորդ կուրսի յուրաքանչյուր ուսանողի հետ:

Ֆակուլտետում իրականացված բոլոր ստուգարքները և քննությունները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչության կողմից, իսկ մասնագիտական բոլոր քննությունները ֆակուլտետում կազմված հանձնաժողովի կազմից գնահատվել և քննարկվել են ուսանողների հետ, իսկ համապատասխան բողոք առաջարկները արձագանքնվել են տեղում:Հանձնաժողովի կազմի մեջ էր դեկանը, մասնագիտության պատասխանատուն, ամբիոնի վարիչը, հարակից առարկայի դասախոսը և քննող դասախոսը՝ գնահատման որոշիչ համակարգով:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2014-2015 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ցուցահանդեսների կազմակերպման և նրանցում պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման ուղիները: Համաձայն աշխատանքային պլանի երկրորդ կիսամյակում նախատեսված է “Մայրության և գեղեցկության ” տոնին նվիրված ցուցահանդես՝ Իջևանի քաղաքային պատկերասրահում, իսկ ապրիլի քսանչորսին՝ Մեծ եղեռնի հարյուրամյակի տարելիցին նվիրված ցուցահանդես՝ Իջևանի քաղաքի համանուն հուշակոթողի շրջակայքում:Այս մասին, նախապես առաջին կիսամյակում տրվել են հանձնարարականներ և ուսանողներին և դասախոսներին, որոնք համապատասխան ժամկետներում ներկայացնեն թեմաներին համապատասխան ավարտուն աշխատանքներ, ինչից հետո հանձնաժողովի որոշմամբ կառանձնացվեն ցուցադրությանը արժանի աշխատանքները:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա տեղեկացրեց երկրորդ կիսամյակի որոշ նախապատրաստական աշխատանքների մասին և նշեց, որ անհատական ծանրաբեռնվածությունների մեջ գրեթե փոփոխություններ չի կատարվել , բացառություն է կազմել “Նյութերի տեխնոլոգիա-2” և “ Նյութերի տեխնոլոգիա-4” առարկաները, որոնց ամբողջ ծանրաբեռնվածությունը կիրականացնի Լ. Ֆլջյանը:

Այնուհետև նշվեց, որ երկրորդ կիսամյակից ուսանողների ներկայացրած էսքիզները “Աշխատանք նյութի վրա”առարկայից, որոնք կարժանան ամբիոնի մասնագետների բարձր գնահատականի, նրանք կազատվեն ուսումնական նյութեր ձեռք բերելու հոգսից(կտրամադրվեն փայտանյութ, կավ, ներկեր, հենքաթելեր և այլն) :

Օրակարգի հարցերը ներկայացնելուց հետո ելույթ ունեցավ մասնաճյուղի տնօրեն Ա.Ս.Առաքելյանը:Նա առաջարկեց , որ ամբիոններում քննարկվեն միջառարկայական կապերի հարցը, հետաքրքիր, կիրառական բնույթի և ավելի բարդ առաջադրանքներ տրվեն ուսանողներին՝ աշխատանքների որակը բարելավելու նպատակով և բովանդակային առումով ճիշտ դասավանդեն <<Նյութերի տեխնոլոգիա>> առարկային բոլոր մոդուլները:

Քննարկումներից հետո առաջարկով հանդես եկավ „Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի”ամբիոնի վարիչ Մ.Մելքումյանը: Նա առաջարկեց հայտարարել մրցույթ ֆակուլտետի բոլոր ուսանողների և դասախոսների շրջանում << Տավուշի մարզի գինանշանը>> թեմայով և նշեց, որ լավագույն էսքիզների հեղինակները կխրախուսվեն:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ռ.Մելքումյան